

ԲԻՐՄԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻ ՍԻ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Գ-ԼՆ

Լ. Կ. ՄԿՐՏՉՅԱՆ

Պետական Մատենադարանում պահպանվող արխիվային նյութերից պարզվում է, որ անցյալ դարի 70-ական թվականներին տեղի է ունեցել գաղտնի նամակագրություն մի կողմից՝ Բիրմայի թագավորի ու պետական գործիչների և մյուս կողմից՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև: Այդ նամակագրության և ընդհանրապես հայ-բիրմայական հարաբերությունների մասին կխոսենք մի այլ անգամ: Այժմ հրատարակում ենք Բիրմայի արտաքին գործերի մինիստրի մի նամակը՝ ուղղված էջմիածնի կաթողիկոս Գևորգ Գ-ին: Նամակը հետաքրքրական է այն տեսակետից, որ ցույց է տալիս, թե ինչպես Բիրման, որն իր անկախությունը պաշտպանելու համար հերոսական պայքար էր մղում անգլիական ագրեսիոների դեմ, ցանկացել է դաշինք կնքել և բարեկամական հարաբերություններ ստեղծել Ռուսաստանի հետ: Բիրմայի կառավարությունը այդ նամակով դիմել է հայոց կաթողիկոսին, խնդրելով նրանից այդ ցանկությունը հաղորդել ռուսական կառավարությանը:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում (թղթապանակ 227, վավերագիր 244) պահվում են նամակի բնագիրը բիրմայերեն լեզվով և նրա հայերեն ու ֆրանսերեն թարգմանությունները: Հայերեն թարգմանությունը կատարել է իր ժամանակ Բիրմայի թագավորական տան թարգմանիչ Մինաս Տեր-Իսկանդարյանը: Ստորև բերում ենք նամակի հայերեն թարգմանությունը:

Պատենն հրովարտակի Միլետով քաղաուրին Պիրմանետանի՝ ու ի Մանդլէյ մայրաքաղաքի:

Պատասխանի դրութեան կաթողիկոսի յարաաքին գործոց նախարարէ Պիրմանստանի (երկու տող գրված է բիրմայերեն և հետո)

Թարգմանութիւն՝

«Մանդլէյ 23 մարտի 1876 ամի.

Նորին Վեհափառութեան Արքայան պատրիարքին Հայոց յերևան

Վեհափառ Տէր.

Օղոստափառ Տէրն իմ ջերմագին փափագանօք կամեցեալ կոել զգաշն բարեկամութեան ընդ ռուսս, ըստ ամենայնի դուն գործէր ցուցանել զյօժարակամ զգացմունս սրտից հպատակաց Տէրութեանդ, որոց յայլ և այլ ժամանակս դիպեցան գալ այսր:

Տամին 1873, մի ոմն հպատակ ռուսաց Օփարէն եկն ի Մանդլէյ, Նորին Վեհափառութիւնն բազում հաճութեամբ ընդունելութիւն մեծ արարեալ, յանձն արար նմա նամակ մի, յորում զիղծս սրտին բացեալ յայտ առնէր, զի մի ոմն ի բարձրագոյն աստիճանաւորաց եկեղեցւոյն Հայոց հաճեսցի գալ ի Պիրմանիայ:

Յետ ժամանակաց ոմն պարոն Մինաս մատոյց զնամակ և զկենդանագիր Չերդ մեծութեան, որ ոչ սակաւ բերկրանս պատճառեաց Նորին Վեհափառութեան:

Հոգևորականության և քաղաքացիականության մասին հարցազրույց

Արամ Բաղդասարյանի հարցազրույց

Ընկերությանը հարցնում ենք, որ Երևանում կառուցված է մի քանի հարյուր հազար մետր քառակուսի տարածք ունեցող բնակարանային կառույցներ, որոնք այժմ օգտագործվում են որպես անօգտագործ հողեր։ Ինչու է այդպիսի կառույցներ կառուցվում և ինչու է այդպիսի կառույցներ օգտագործվում որպես անօգտագործ հողեր։



Հոգևորականության և քաղաքացիականության մասին հարցազրույց

Նամակի թիվ 144/144/144 Գործարարական

Հարգելի Վարչապետ, Մարտի 15, 2014 թ. 14:44

Ստորագրված է 14:44/144/144

Արամ Բաղդասարյան

Հարգելի Վարչապետ, Մարտի 15, 2014 թ. 14:44

Նամակի թիվ 144/144/144 Գործարարական

Յետ ընդունելոյ զնամակն Ձեր ի ձեռաց պարոն Մինասայ մի ոմն ի բարձրագոյն աստիճանաւորաց եկեղեցւոյն Հայոց յայսմ իսկ ամսեան յայցել, մեզ և Վեհափառութիւն Նորին կամեցեալ հաւաստեօք ցուցանել զմտերմական սէր իւր որ առ Ռուսս՝ մեծաւ պատուով և ասպնջականութեամբ ընկալաւ զնա:

Նորին Վեհափառութիւն, ամենայն նախարարք մերոյ պետութեան և ես ինքնին մեծաւ փափագանօք բաղձամբ երգմնի և դաշնաւոր լինիլ ընդ Ռուսս, և երջանիկ զանձինս համարիմք զիտեցեալ զի Ձերդ մեծութիւն յետ յայտ առնելոյ զյօժարակամ բաղձանս սրտից մերոց Տէրութեան Ռուսաց, հաճեացի ծանուցանել մեզ զյօժարութենէ Նորին առ այս կցորդութիւն:

Ձերում Վեհափառութեան ամենախոնարհ ծառայ նախարար արտաքին գործոց Նորին Վեհափառութեան թագաւորին Պիրմանիոյ»¹:

**ПИСЬМО МИНИСТРА ИНОСТРАННЫХ ДЕЛ БИРМЫ АРМЯНСКОМУ
КАТОЛИКОСУ ГЕОРГУ IV**

Л. К. МКРТЧЯН

(Р е з ю м е)

В 70-х годах прошлого века между королем Бирмы Миетомэ и армянским католиком Георгом IV имела место тайная переписка. В Гос. Матенадаране АрмССР (в архивном фонде католикосата, папка № 227, докум. № 244) сохранилось письмо министра иностранных дел Бирмы, который от имени короля обращается к католикоосу. Письмо показывает, что бирманцы, борясь против английских колонизаторов, стремились установить дружественные отношения и заключить союз с Россией. Министр обращается к католикоосу с просьбой о посредничестве. В заключении письма министр пишет:

«Его Величество, все министры нашего государства и я лично жаждем быть в клятвенном союзе с Россией, и мы будем счастливы узнать, что Ваше святейшество, после сообщения русскому правительству добровольного стремления сердца нашего, соизволит оповестить нас об этом».

Приводятся факсимиле оригинала письма на бирманском языке и его древнеармянского перевода, сделанного придворным переводчиком бирманского короля Минасом Тер-Искандаряном. Письмо датировано 23 марта 1876 года, город Мандалай.

¹ Հաջորդում են բիրմայերեն լեզվով գրված սոսկեր (4 սող):